ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԵԼԱՌՈՒՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ (ՌԵԱԴՄԻՍԻԱՅԻ) ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԿԱՄ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի և Բելառուսի միջև երկկողմ և բազմակողմ ձևաչափերում համագործակցության դինամիկ զարգացումը բխում է Հայաստանի Հանրապետության ազգային շահերից:

Երկկողմ համագործակցության տեսանկյունից հարկ է ընդգծել վերջին շրջանում երկու երկրների արտաքին քաղաքական գերատեսչությունների միջև ակտիվ փոխշփումները, որոնց ժամանակ երկուստեք ընդգծվել է երկկողմ իրավապայմանագրային դաշտի ընդլայնման և խորացման կարևորությունը:

«Հայաստանի Հանրապետության Կառավարության և Բելառուսի Հանրապետության Կառավարության միջև հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրումը, երկու երկրների միջև միգրացիայի ոլորտում փոխգործակցության տեսանկյունից վաղուց հասունացած հարց էր, որը բխում էր նաև ԵԱՏՄ շրջանակներում երկու երկրների ստանձնած պարտավորություններից:

Համաձայնագրի նպատակն է Կողմերի օրենսդրությանը համապատասխան սահմանել պատասխանատվություն իր տարածքում կամ դրանով օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց անօրինական միգրացիայի համար՝ հարգելով Կողմ պետություններից յուրաքանչյուրի ինքնիշխան իրավունքը:

Համաձայնագրի վավերացումը/հաստատումը կստեղծի իրավական բարենպաստ պայմաններ երկու երկրներում առանց թույլտվության բնակվող քաղաքացիների հետընդունման գործընթացը պատշաճ կազմակերպելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալը 2021 թվականի հոկտեմբերի 8-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Բելառուսի Հանրապետության Կառավարության միջև հետընդունման (ռեադմիսիայի) մասին համաձայնագրի հաստատումը կամ վավերացումը Հայաստանի Հանրապետության վարած արտաքին քաղաքականության առումով նպատակահարմար է:

ՀՀ արտաքին գործերի
նախարարի պարտականությունները կատարող

Recoverable Signature

X

ԱՐՄԵՆ ՂԵՎՈՆԴՅԱՆ

Signed by: GHEVONDYAN ARMEN 3014710067 **Արմեն Ղևոնդյան**